ռահարի գերեզման» եւ պատմեց մի հին աւանդութիւն, որպէս թէ, մի տղայ եւ մի աղջիկ միմեանց շատ սիրելիս են եղել. հայրը չէ ուզեցել իւր աղջկան տղային տալ. նրանք միաբանւում են, եւ տղան մի գիշեր փախցնում է իր սիրուհին: Հայրն իմանում է, աղջկայ ետնէն է ընկնում, եւ այս ձորի մէջ բռնելով առանց մի խօսք ասելու իր խենջարը խրում է նրա սիրտը եւ սպանում է: Տղան այս տեսնելով, չէ կարողանում համբերել իր կսկիծին, եւ մի ժայռի գլխից իրան վայր է գցում եւ մեռնում է: — Մարօն ցոյց տուեց բարձր ժայռը, որի մօտ նոյնպէս կուտակուած էին մանր քարերի կտորտանք: — Աղջկան թաղում են այնտեղ, ուր թափուել էր նրա արիւնը, իսկ տղային այնտեղ, ուր ընկած էր նա ժայռից: Այն օրից նզովք էր դրուել, որ ամէն մի ճանապարհորդ, այնտեղից անցնելով, մի քար գցում է նրանց գերեզմանի վրայ, ի նշան այն նախատինքին, որով այն աղջիկը մրոտեց իր հօր եւ մօր անունը:

— Դու էլ այն աղջկան վա՞տ ես համարում, որ քարկոծում ես խեղճի գերեզմանը, — հարցրի ես:

— Մէկ աղջիկ, որ ուրիշ տղայի ետնեն է ընկնում, այդ վատ չէ՞ — հարցրեց նա պինդ ձայնով:

— Ապա ի՞նչ պէտք է անէ, երբ սիրում է տղային: Սիրելն ինչով է վատ:

Նա սկսեց ծիծաղել, որպէս թէ լսում էր ինձանից մի յիմար խօսք:

— Աղջիկն ինչպէ՞ս կարող է սիրել տղային, երբ հէրն ու մերը ատում են: Հա՛ թող սիրէ, այդ ոչինչ, նրա կամքով խօ չէ՞, որ օտարի տղայի ետեւից թրեւ է գալիս: Ամօթ չէ՞:

Ես ուզեցի հերքել նրա ասածը, բայց նա իմ խօսքը կտրեց, եւ մի կծու խոժոռմունք գործելով իւր գեղեցիկ երեսի վրայ, ասաց.

— Է՛հ, դատարկ բաներ մի՛ խօսի, գլուխս տանում ես...:

Նա վազեց առաջ:

Ճանապարհը Մարոյի համար սովորական լինելով, չէր զգում նրա երկարութիւնը: Ես համարեա թէ յոգնեցայ: Բարձրանալով բլուրի գագաթին, նա կանչեց.

— Դիբօ՛, Դիբօ՛:

Նրա զիլ եւ ձգական ձայնը արծաթէ հնչիւններով տարածուեցաւ հեռու սարերի մէջ:

Հանդիպակած բլուրի ետեւից յայտնուեցան մի քանի փոքրիկ կերպարանքներ, որոնք թռչկոտելով եւ ճիչ բարձրացնելով, վազեցին Մարօի առաջ: Դրանք երեք կիսամերկ աղջիկներ էին, այնտեղ արածացնում էին Կ. գիւղի